 անգերն ծալուած ըլլալով ծալիմ կողմերը մեր-
 մակ ու զուրքը զիսն զոյմ մը ունիմ: — ԼԱՆ-
 ԳԱՄԱՆՔ՝ հատակաքոս զքի մը պակասմանը ե-
 դոմ ըլլալով՝ երկու քուրքերու ծալիմ մէջանդ 5
 հատ կազմի շառիմ ծախեր կամ: 21-22 էջի ունե-

ցող քաղաքը 8,5 սնվւմ. յայնքով վերեւ վար կը-
տրուած է: — ԳԻՐԸ՝ միջիմ մետրով պնծւ է (մո-
տաքայն ձեւով) ԺՐ. զարու գիր: ՄԵԼՈՒՅԻՆՈՒՆԵՐԸ
նոյն գրով մամր յափով իմ: — ՊԱՐՈՒՆԱԿՈՒ-
ԹԻՒՆ՝ 10-20 էջիւ ունեցող քաղաքը կը պարու-
նակէ Սաղմոսաց ձեւէ գլխով 5-11 համարները՝
երբեմն միկնութեամբ: Իսկ 21-22 էջերը կը պա-
րունակեն՝ Բ. օրինաց ԼԲ. Գլ. 19-29 համարնե-
րէն հետուածներ՝ երբեմն միկնութեամբ:

Թիւ 7- մագաղաքեայ հատակոտորիս
ընդօրինակութիւնը

էջ 19

Գիրք Սաղմոսաց Դաւթի (մեկնութեամբ)

Գլ. ձևԸ. համար 5-11

Զի նա սասց եւ եղեն. հրամայեաց եւ
հաւանեցան, կարգեցան զնոսա յաւիտեանս
յաւիտենից. սա՛ման եղ որ ոչ անցանէ:
Այսինքն կարգեաց տէրն մեր Յիսուս
Քրիստոս, յուսաւորեցոյն, մկրտութեամբ
սուրբ աւագանան զանպահճան կեանսն
որպէս եւ յաւնարանին սակ. թէ որ հա-
ւատայ յիս թէպէտեւ մեռանի կեցցէ. եւ
սա՛ման եւս զաւրն հատուցման արգարոց
եւ մեղաւորաց:

Աւրճեցէք զտէր յերկրէ վիշապք. եւ
ամենայն խորք. Այսինքն. սատանայ եւ
զաւրք իւր, որք ոչ կամեցան հնազանդել
Աստուծոյ ակամայ արճնեցին զնա. քան-
զի տեսեալ նոցա զՏէր մեր Յիսուս Քրիս-
տոս ի պարտւհասն զնոսա. եւ սակին որ-
դի Աստուծոյ եկիր տարածած տանջել
զմեզ. զիտեմ եւ զքեզ ով ես. հուր եւ
կարկուտ, քնոն եւ սառն, Մուրրոյ Աս-
տուծոյ հոգեմ եւ մրրիկք ոչք առնէք բո-
րան նորա, լերինք եւ ամենայն բյուրք,
ծառք պտղաբերք, եւ ամենայն մայրք,
պապան անասուն սողուն, եւ ամենայն
թռնուն թռչաւոր, թաղաւորք երկրի եւ
զարմ իւր իշխանք եւ աւ...

էջ 20

(Գիրք Սաղմոսաց Դաւթի՝ մեկնութեամբ)

(Գլ. ձևԹ. համար 1-3)

Աղեգութիւն

ձևԹ

Աւրճեցէք զՏէր յարհնութիւն նոր,
արհնութիւն նմա յեկեղեցւոյ սրբոց.
Այսինքն... աւ որեցէք զՏէրն մեր Յի-
սուս Քրիստոս արհնութիւն նոր. նոր ժո-
ղովոր... քաղաքաւ յարարանաց իւրոց.
զի ոչ ոք երդեաց նմա յայպիսի արհնու-

թիւն յազգացն առաջնոց. բայց միայն
մէք որ տեսաք յուսք զյարաբարան Որդ-
ւոյն Աստուծոյ: Եւ արհնութիւն նմա
յուրոց եւ ի մարմնոց սրբոցն, յաղապ ո-
րոյ եւ առաքեալ սակ, թէ մարմ... նք ձեր
տածար են Հոգւոյն սրբոյ որ ի ձեզդ է:
... րախ եղեւ Իսրա(յ)էլ յարարել իւր,
որդիք Արիւնի ցն... սացեն ի թաղաւորն
իւրեանց. Այսինքն, ուրախ եղեւ ժողո-
վուրդն յուսաւորեալ մտաւ յԱստուածն
որ բարս զնոսա, յառաջնումն ծննդեանն
եւ ի մկրտութեանն. եւ որդիք երկնային
քաղաքին (ց)նծացեն ի Տէրն մեր Յի-
սուս Քրիստոս, որ թաղաւորեաց ի վե-
րայ նոցա: Աւրճեցեն զանուն նորա
արհնութեամբ, սաղմոսաւք եւ արհնու-
թեամբ սաղմոս ասացին նմա. Հա՛հ տէր
ընդ ժողովուրդս իւր, եւ բարձր առնէ
հեզս փրկութեան, այսինքն Հա՛հ ընդ
նոսա եւ զհնազանդեալսն՝ պատուիրանաց
իւրոց բարձր առնէ յարճալորութիւն երկ-
նից, եւ պարծեցին ամենայն սուրբք ի
Տէրն մեր Յիսուս Քրիստոս, ի խաչ...
նորա, որպէս եւ Պաղոս սակ, որ պար-
ծին ի Տէր պարծեցին, եթէ

էջ 21

Գիրք երկրորդ օրինաց՝ մեկնութեամբ

Գլ. ԼԲ. համար 19-22

ետես Տէր եւ նախա... ուստերաց եւ
զատե... զյանդղնութիւնն որ ի սորա...
հրեայքն, եւ բարձրացաւ որդ... ցանէ
զնորհս Հոգւոյն... Հաւատութիւն նո-
ցա պատմ... պէս հարքն նոցա որ յուն...
աղկ անպատում եւ անմիտ... զհրեայսն,
ըստ Պաղոս... եւ զարհամարհեալս զի...
... Դարձուցից զերեւ... յա զինչ լինելոցն
... Զի աղկ ս... քա նախանձեցուց...
եւ բարկացուցին զ... Արդ եւ ես նախան...
... տիւ, եւ անմիտ աղ... Աւրճ... Զի
հուր բոր... եւցէ

էջ 22

Գիրք երկրորդ օրինաց Գլ. ԼԲ.

համար 24-29

... զպաշտարեկ գէշ... նից... ակե-
ցից ի վերայ նո... որ եւ անդր քարշես...
րացէլ զնոսա սուր... անտի արհաւիրք...
ղերմ. եւ զտղայս... երմ... զապարե-
ցուցից... մտութեան թշ... ցք եղիցին
եւ մի... ամիքն եւ ասացին... մեր հաւար
եւ ոչ... են նոքա եւ ոչ զայ... որհեցան
մի...

և .

ՅԱՅԱՄԱՐԱՌԻՐ ԹՂԹԵԱՑ ԶԵՌԱԳԻՐ

Ի Սարգիս Եկեղեցւոյ Գրլըմ գիւղի

ԹՈՒՂԹՔ՝ 473. — ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 42.5 X 29 սմղմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 30 X 19. — ԳԻՐԸ՝ Յայսմաւուրիս գիրմ խոյր եւ մաքուր է, սկզբնատառերն զեղեցիկ թաշնագրեր ու ծաղիկ մկարմեր են. զեղբուսած տմոյշ գոյմերով մերկուած՝ զեղեցիկ յօսամեզարդերով. — ՆԱՄԹՔ՝ Նըկու մկարմեր կամ, միմը՝ լուսաւորչի, միւրը՝ Ս. Յաւուրեան. — ԼԱՆԳԱՄԱՐՔ՝ Ետեւէն ու աղեւնէն քաքերու բիշ պակաս ուրի. — ՅԵՇԱՍԿԱՄԳՐՈՒԹԻՒՆՔ՝ Յայսմաւուրիս գրուրեան վերաբրմաք բուն ճարմագրուրեւիմը կը պակսի. բայց քազուս տեղերն՝ ի մասնաւորի մամն աւուր ընթերցումով վերջը գրուած՝ մի բամի տաղով՝ արմամագրուրիւնով կամ:

Թղթեայ ձեռագիր Յայսմաւուրիս յիստակարանները.

Յայսմաւուրի օրական ընթերցումին վերջը գրուածներն.

1. Որ ողորմի Բրիստոս Աստուած քստացողին գրոյս՝ ինչպէս ի Մարգրիտ եւ ձորն Մաթթիս եւ մօրն եւ կողակցին ինքուրն եւ որդւոյն Անուրն, եւ իւր կողակցին ինքուրն եւ աւիմաստ գրի Պօղոս եւ ինք՝ քահանային կարգացողաց եւ յոռոց եւ Աստուած ողորմի ասացողաց:

2. Որ ողորմի Բրիստոս Աստուած քստացողին գրոյս՝ ինչպէս ի Մարգրիտ եւ ձորն Մաթթիս եւ մօրն եւ կողակցին ինքուրն եւ որդւոյն Անուրն, եւ իւր կողակցին ինքուրն եւ աւիմաստ գրի Պօղոս եւ ինք՝ քահանային կարգացողաց եւ յոռոց եւ Աստուած ողորմի ասացողաց:

3. Որ ողորմի ստացողի գրոյս Պետրոսին եւ կողակցին Նուրնփարին ձեռացն Վարդանիկ, Մարգրիտին եւ որդւոյն Թումասին, Սողոմոնին, Ակորին, Սիբաւիլին դուստր Աննային:

4. Որ ողորմի ստացողի գրոյս՝ Պետրոսին եւ ձորն Վարդանիկ եւ մօրն Մարգարտին եւ կողակցին Մարիամին եւ որդւոյն Մարտիրոսին Վարդանիկ, դուստր Աննային, Նուրնփարին կարգացողաց:

5. Յայսմաւուրիս սկիզբը գրուած յիստակարանները.

Ջարդկան կեանս այսպէս իմա, Որպէս յորժամ նարդ ոք խաղայ. Թէ ոչ անկէր որ պիտոյն է Զանկեայն անպէտ՝ արուեստն աւղղ...

6 Ի ՌԻՄԼԻ օգոստոս ԻԶ

Յովակիմ սեւաւոր

վարդապետ պարտաւոր:

7. Ի ՌԻՄԼԻ օգոստոս ԻԶ Յովակիմ սեւաւոր վարդապետ պարտաւոր:

8. Գանդի դու մարդ եւ յիշեալ օր դեւ յուստան (դայստեան) Բէրիստոսի:

9. Ոչ մեղք եւ ոչ անցանք ար եւ անց մայաց ընդուցայ եւ ոչինչ եղէ:

10. Ով եղբարք իմ եւ սիրելիք յորժամ որ կարդայք մէկ ի իր բերան ողորմի ասէք մեր ծնողաց հոգուն, Աստուած մեզ ողորմեսցի, իւր միւսանցած դայստեանին, յորժամ գայ դատել զերկիր. ամէն:

ևԱ.

ԵՐԱՆԴՐԱՏԵՍԻՐ ԹՂԹԵԱՑ ԶԵՌԱԳԻՐ

Ի Ս. Սարգիս Եկեղեցւոյ Գրլըմ գիւղի

ՌՃՃԷ (1771) = 1728

ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 31 X 21,5 սմղմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 23 X 15 սմղմ. — ԳԻՐ՝ Ետեւէն զրուած փետուր գրելով էին՝ ձեռքի գիր է. — ՅԵՇԱՍԿԱՄԳՐՈՒԹԻՒՆՔ՝ Գրքիս վերջը կամ Ետեւէն յիշատակարմոցը.

Բուն յիշատակարմութիւն (յաւ գիրով)

1. Փառք ամենասուրբ Երրորդութեան հօր եւ Որդւոյ եւ հոգւոյն սրբոյ այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից. Ամէն: Արդ, ասարտեցաւ գիրքս ի թվականին հայոց ՌՃՃԷ, ընդ հոգիւնեալ սրբոյն Գեորգայ ի հայրապետութեան Կարապետի կաթողիկոսի ամենայն հայոց եւ որք վայելէք զսա յիշեցէք զՄիւսազնող սորին եւ զձեռողին իմ եւ զհարապետն եւ զձեռողն նորա զհազարն, հայրապետին եւ կողակցոյն Պաղտատին եւ Յովակիմ եւ զՊաղտատն, որ ստացաւ զսա եւ ինչ եկեղեցիներ սրբոյն, ամենայն իրկէին ի գիւղն որ կոչի ԳԵՂ, զոր տէր Աստուած բարեաւ վայելիւ սացէ. Ամէն:

(բաւական աղէկ գրով)

2. Ով քահանայ Աստուծոյ, այս հայրապետ անուն թրիստոնեայ, որ ըզսա էառ իւր եւ ծնողացն հոգւոյն՝ եւ դու

պարտիս ամէն ժամ բրած օրն՝ զսա յիշատակի, զոր տէր Աստուած կարողութիւն տացէ՝ Ամէն:

(Ինեղճ գրով)

3. Իս Եղեկացի ի գուղէն Գիւուն Հարպետնց Ղազարի որդի Հարապետս, առիւտայս Խորհրդատետրս հալալ վաստակոց ժող էւ ետու [յ] իշատակ մեր գիւղին, ի դուռն սուրբ ամենայն Փրկիին. ամէն. վասն մեր. եւ ննջեցեալս [յ] ինեղճ հայր մեղա [յ] իւ, ամէն:

4. Այլ յիշատակարան ծայրն աղապ ճաղապ գրով, վերնոյն պէս գրուած. կուշտն նշանակուած է աի գուղ Խիւճիւն:

5. Եւ եղեկացի ի գիւղէն Ղազարի որդի Հայրապետս առիւտայս Խորհրդատետրս, հալալ վաստակով եւ եղի ի յիշատակ ի դուռն Սուրբ Սարգսայ:

ՄԱՆՈՐՈՒՔԻՆ.

Խորհրդատետրիս ճոր օրհնեալ աղօթքին մէջ նշանակուած է այսպէս՝ Եթապետրաց մերոց եւ զինուորեալ մանկանց նոցա՝ ևւն:

ԽԲ.

ԱՆԻՏԱՐԱՆ ԹՂԹԵԱՆ ՁԵՌԱԳԻՐ

Ի Ս. Սարգիս եկեղեցւոյ Գրլըն գիւղի ՌԿԻ (1064) = 1615

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 18 X 13.5 սմգմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 13 X 8 սմգմ.:

Տեղեկութիւնք ձեռագրիս վրայ.

Սկիզբն կայ Եւսեբայ երկու զլուսն մաքուր գրով եւ ութ կանոն գաւազան.

Ի. Կանոն յորս երկուն Մատթէոս, Ղուկաս:

Բ. Բ. Մատթէոս, Մարկոս, Ղուկաս: Եւսեբի մէկ զլուսն

Կանոն Ա. յորս թիւք բոտ նորին ածան յորթին Մատթէոս, Մարկոս, Ղուկաս, Յովհաննէս.

Կանոն Զ. յորս երկուն Մատթէոս, Մարկոս, Մատթէոս

Կանոն Է. յորս երկուն

» Ժ. յորս երկուն

» Գ. յորս Գ.

» Դ. յորս Գ.

» Բ. յորս երեքն

» Ժ. Յովհաննէս

Այս գաւաղաններն մաքուր գրով են եւ զեղեցիկ ներկաւ ծաղիկներով: Ունի Աւետարանս Զորս Աւետարանաց աստկերներն խլի-փլի, բայց ներկերն եւ ոսկեղօծումն լաւ, ինչպէս նաեւ Աւետարանի սկիզբներն ծաղիկներով:

Յիշատակարանք.

1. Փառք ամենասուրբ Երրորդութեան Հօր եւ Որդւոյն եւ Հոգւոյն սրբոյ յաւիտեանս, Ամէն: Գրեցաւ Ս. Աւետարանս թվին ՌԿԻ ձեռամբ Թոխաթցի Միքայէլի: Արդ աղայեմ զամենեանեղ, որք հանդիպիք ամա կարողալով կամ օրինակելով, մէկ հայր մեղախ մի յիշեցէք Պիքայէլ զրիւս եւ զկենդանիս եւ զննջեցեալս իմ եւ Աստուած զյիշողդ ինչ իւր միանկատ զայստեանս. Ամէն:

Հայր մեր որ յերկնսդ եւ սուրբ: Գրեցաւ ի մայրաքաղաք ի Կոստանդինուպոլիս:

(Անշահ, տարբեր ձեռագր գրով)

2. յի յարամենն թիւ տոճմային եւրիս յորթեան վճարեն եւ դի եղեւ այս կատարման եօթնեակ երեքեակ այս: Հրեցեալ ամօք յի կատարեալ իւր ինքն ա՛մօք:

3. Յիշատակ այս սուրբ Աւետարանս յթեցի Արրիկեան եղօր Շարպաթին՝ Ասյանին, Հօր Մուրատին, մօր Մեյնամին, կողակցոյն Մարիամին, միւս կողակցոյն Թուրմանտային, Հարսեղուն Կուլխտանին, Մարիամին որդոցն Սիմէոնին, Աստուածատուրին, Պաղտասարին, միւս մօր Խրմդին, միւս Հարսին Աճապխանին, Մարիամին, եւ այլ միւս որդոց Յախճանին, Պաղտասարին, Ղուսասարին, Որուփանին, Մարթային, Յակոբին, մօր Գուրգոյնին, զոթանյին ձեռանին, Զմրութին: Ով եղբայր, ի սմա կարողալով կամ աւրինակելով յիշեցէք ի մաքրափայլ յաղօթս մեր եւ Աստուած յիշէ ի ձեզ յետ միւսանդամ պայտեանդ. Ամէն:

Գրեցաւ թվին ՌԿ նոյնմբեր Ի՛ն. օր չալաթ վայելում սուրբ Բակոր եկեղեցուն ի ձեռն Վարդան երեցուն:

(Այլ յիշատակարան ձեռագր գիր)

4. Ի թվին Հայոց ՌՄԻ. ին եւ անիմաստ նիկողայոս երէցս, որ եմ Խըլընդիւցի, այս սուրբ Աւետարանս ետու նորողել յիշատակ եւ ի վայելումն սուրբ Սարգիսս եկեղեցուն Ժ. զրուէք Պայէ Ատեհիանն տուաւ. Է. զրուէն աստի եւ ան-

տի հաւաքելով, Այս սուրբ Աւետարանս թողուցանի մեր ննջեցեացն հոգուն յիշատակ, եւս Մտեւիանին կողակիցն մէկ փէշկիր եղ սուրբ Աւետարանին շուշալայ. Աստուած ողորմի իւրեան եւ իւրեանց ննջեցեացն հոգուն, ամէն: Եւս Աստուած ողորմի Յեւն ողլու Մարդարին հոգուն, որ նա է տուած առաջմանէ յիշատակ:

ԽԳ.

ՄԱՇԹՈՑ ԹՂԹԵԱՑ ՁՆՈՒԱԳԻՐ

ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Քարծի գեղջ

ՌԻ (1020) = 1571

ՄԵՆՈՒԹԻՒՆՆԷ՝ 17.5×13.5 սմղմ: — ԳՐՈՒԹԻՒՆՆԷ՝ 12.5×0.5 սմղմ: — ԳՐՈՒ՝ ամփոք գրչի գրածմ:

Խմբօրութիւն.

Այս Մաշտոցին սկիզբը կայ պատկերս Յովսէփ եպիսկոպոսին, յունական պատարաքի զգեստով, բայց գլուխն վեղարով՝ ճակատն բաց, մէկ ձեռքն ձախ կրծից վրայ, միւս ձեռքն Աւետարան, ու տակն զրուած ալապէս՝

«զՏէր Յովսէփ եպիսկոպոս ստացող զրոյս յիշեա Տէր, աղաչեմք:

Յիշատակարանք.

1. Փառքն հաւերն անսկընդակեանքն եւ միշտ ծնելոյն՝ ի նմանէ՝ որոյն միածնի եւ յաւիտ քրիստոսն հոգւոյն ճշմարտի, որք են՝ ընդ թեմամբ միացեալք եւ անձամբ յատկացեալք. Որում փառք ի հրեղինացն եւ երկրպագութիւն ի հոգեղինացս այժմ եւ անգրաւ յաւիտեանս յաւիտեանից, Ամէն: Որ էտ կարողութիւն եւ դարութիւն բազմապէս տկարութեան իմոյ հասանել յաւարտ Աստուածաշունչ եւ հոգիարդիկ կտաւին, որ կոչի Ձեռք Մաշթոց, որ է սա կառարող է խորհրդոյ եկեղեցւոյ եւ ունի սա շարագրեալ յինքան զամենայն հոգեւորական եւ մարմնական սրբութեան անդամոց մերոց, զոր թէ կամիս շուտով գտանեա սկիզբն զրոյս ի ցանկ նկարեալ: Եւ արդ քրիցաւ սա ի թուականին Հայոց մեծաց ՌԻ. ի խնդրոյ պատուական եւ նազելիք երկես երանալ եւ հոգեւոր եղբայրն մեր տէր Յովսէփ արքեպիսկոպոսի, ի վայելումն անձին իւրոյ. բարեախրի եւ յետ աստեացս յիշատակ բարի յեկեղեցի: Որ ստացաւ զսա ի հայայ արդեանց եւ յարգար վաստակաց անթիմ յիշատակ տէր Յովսէփ ե-

պիսկոպոսին եւ ծնողաց իւրոց հաւերն Վարդանին եւ մարն Մուղային, եւ եղբորն Մուրատին եւ Աստուածատրին եւ ամենայն մերձաւորացն՝ կենդանեան եւ հանգուցելոց, ուղիղ սրտով եւ յի բերանով Աստուած ողորմի ասացէք Տէր Յովսէփ եպիսկոպոսին եւ ամենայն երախտաւորաց նորին. Ամէն: Ի Լիմն զրեցաւ եւ յիւրծուարեք Աստուածածինն աւարտեցաւ: Ձեռամբ Ձաքարիա եպիսկոպոս մեղապարտի, ի յերկիրս Քանքերունի, ի յառաջորդութեան սուրբ ուխտիս թախտիս Սուխարայ տէր Միհայ եպիսկոպոսի եւ յայ միարան եղբարցս, այլ եւ ի դառն ժամանակիս որ տիրէ Շամբումակերտի Ասման ազգն, յորում կեամք ի տառապանս ազգս հայոց. եւս առաւել զվանորայս, որ առին զայրերն եւ մայրն յանկջուցին եւ մեք փախտուական յորոց եւ զմեղ Տէր Աստուած փրկեցէ ի ձեռաց աշխարհաց զամենայն հաստացեալ բրիտոնեայս. Ամէն:

Մանասնդ զստացող զրոյս գտէր Յովսէփ քարեւել եպիսկոպոսն եւ զեղբայրն իւր զհաստարիմ տանուտէրն զԱստուածատուրին եւ զկողակցին զՊաթունջն, զստերն Գուշնիպէն եւ ըզՄուրադն, եւ զծնողսն զՎարդան եւ ըզՄուղայն:

Գարձեալ կրկին աղաւմ զմեղ, «ի մանկունք սուրբ եկեղեցւոյ, յիշեմք ի մաքրափայլ յաղթօս ձեռ զստացող սուրբ զրոյս զՅովսէփ եպիսկոպոսն եւ Աստուած ողորմի ասացէք սմա եւ ծնողաց քորա, հաւերն Վարդանին, եւ մարն Մուղային, եւ եղբորն Մուրատին, եւ կողակցին Մուխթին, եւ որդւոյն Կիրակոսին, եւ միւս եղբայրն Աստուածատուրին, եւ կողակցին Նուբարին, եւ որդւոյն Վարդանին, եւ կողակցին, եւ որդւոցն Ձաքարին, Մարտիրոսին եւ Յովանիսին եւ Փանոսին, եւ զստերն Նուբարին, եւ միւս որդւոյն Մուրադին, եւ կողակցին Միքիլասին, եւ որդւոցն Գալուստին եւ Կալասին եւ Ոյլաթին եւ Աստուածատուրոյ, յետին կողակցին Պաթունջանին, եւ որդւոցն Նաստաբոյրին եւ Եղիպէն, եւ զստերն Մուղային, եւ քուերն Գուշադին, եւ որդւոյն Նորա Հնրապետին եւ Պունկայ, եւ միւս քուերն՝ Էթարփաշին, որդւոյն Ատոմին եւ Հարաթին, եւ միւս քուեր Սառային, եւ որդւոյն Մուրին, եւ միւս քուերն Բէկիջանին, եւ որդւոցն Միքաբին եւ Փախշանին, եւ հաւերն Գուշադին, եւ կողակցին Նիքարին, եւ որդւոցն Մարտիրոսին եւ Միշամին, եւ մեծ պապուն Դանիէլին եւ Բակորին, Եւ-

Հօյին, Մուրատին եւ Եօփակին եւ ամենայն արեան մերձաւորացն սոցա՝ կենդանաց եւ շանցուցնոց:

Էս Աստուածն ամենայնի, որ առաւն է ի տուր բարեաց, ձեզ եւ մեզ ողորմեացի. Ամէն:

Էս եւ Եփակի եպիսկոպոսն ետու գրել զՄաշթոցս յիշատակ բարի Հոգւոյ իմոյ եւ ծնողաց իւրոց Հաւորն Վարդանին, եւ մարն Մուղային, եւ եղբարցն Մուրատին, եւ Աստուածատրին, եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց, եւ եղի ի դուռն Թեոդորոսի գաւառավարին ի զեռանց, որ կոչի Խառակոնիս, եւ մի ոք իշխեսցէ զսա ծախել եւ կամ գրաւ դնել եւ կամ զողջաւայ, ոչ յիմոց եւ ոչ յաւտարաց, եւ որ յանդգնէ զանկճքն եւ բզկաչէնին առջկ եւ զխաշանուացն Քրիստոսի, եւ զբարկութիւն Աստուծոյ ի վերայ իւրն բերել. Ամէն:

Դարձեալ յիշեցէք ի Քրիստոս զԱստուածատուրն, զկոյակիցն իւր Մամախաթին, եւ զորդիքն իւր զՄուրատ, բզտէր Եփակի, եւ զկողակիցն իւր զԽաթունաղէն, եւ զորդի իւր զեղիէն, եւ բզդուտարն Նուրարն եւ ըզԳուլանփաշէն յիշեցէք եւ Աստուած ողորմի առաջէք:

ԽԻ՛.

ԱՏԵՏԱՐԱՆ ԹՂԹԵԱՍ ԶԵՌԱԳԻՐ

Ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Քարձի գեղջ

ՌԼԸ (1038) = 1589

ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 30.5x22.5 սնդմ.: — ԳՐՈՒԻՒՆ՝ 24.5x10.5 սնդմ.:

Մանօքութիւն.

Այս Աւետարանին գիրն անվարձ ձեռքի գիր է, խոշոր-մուր: Սկզբն պակաս եւ կր կարդացուի թեւ ի ծնաննն Յիսուսիս կտորէն:

Յիշատակարան.

1. Փռոք ամենատուր Երրորդուն թան Հաւր եւ Որդւոյ եւ Հոգւոյն սրբոյ յամ եւ միշտ եւ յախտեանս յախտենից: Դրեցաւ յայտ գիրս եւ փառաւորեալ Տեսնն Աստուծոյ մերոյ եւ փրկչին Յիսուսի Քրիստոսի. Ամէն:

Քրիստոս Աստուած ողորմի ստացողս Աւետարանիս խոնայ Սիմաւոնին, եւ Հաւրն Նորա կիրակոսին, եւ ծնողացն Նորա Ամանթին, եւ եղբարն Նորա Տու-

նաւագին, եւս առաւել Սիմաւոնին կողակցին Տովաթին, փոքր Հարսին Սառային. Ամէն:

Որ նոր կազմել երես դասս սուրբ Աւետարանս ի Հայալ վաստակոցն եւ Հայալ րնչից եւ էտուր յիշատակ ի դուռն սուրբ Աստուածամարն:

Դարձեալ աջն Հովանի լիցի ի վերայ ձեր: Յիշեցէք խոնայ կիրակոսն, եւ իւր կողակցն Ամանթին, եւ որդին Նորա Սիմաւոն, եւ փոքր որդին Տունաւաղն, նոր կազմել էտուր, եղի յիշատակ իւր ծնողացն, իւր ննջեցելոցն Հոգւոյն. ամէն:

Ի Թվին Հայոց ՌԼԸ. ձեռամբն բազմակց սուտաննոս անարժան Եփակիմ Երիցուն ... յիշեցէք ... սիմ մա... Ետն զեղբարս իմ... տուին. եւ զմարսն իմ Խանմէլիքն եւ զիւր ննջեցեալսն եւ Աստուած զձեզ յիշէ. Ամէն:

ԽԵ՛.

ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐԻՔ ԹՂԹԵԱՍ ԶԵՌԱԳԻՐ

Ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Քարձի գեղջ

ՄԵՍՈՒԹԻՒՆ՝ 33 x 23.5 սնդմ.: — ԳՐՈՒԻՒՆ՝ 25x10 սնդմ.:

Յիշատակարանք.

1. (Քառոք քեզ Տէր Աստուած մեր որ պարզեւեցեալն ծայրը՝ գիրը բաւական աղկկ).

Արդ աղաչեմ զամենեւեան որք Հանդիպիք յայտ տառիս, կարդալով եւ կամ օրինակելով, յիշեցէք ի մարարափայլ յաւորթս մեր զանարժան Խառակոցի զԱտեփանոս Երէջ ծրաղորչս եւ զծնողս իմ զՏէր Ղազարն մի ողորմեայի յիշել ի Տէր, եւ զձեզ յիշեցէ Քրիստոս իւր միսանդամ դայտեանն. Ամէն:

2. (Ս. Զատիկ ճրագաւոյցի արարողութենէն վերջը այսպէս զգրուած). Բայց այս իրկուրս սեղան օրհնելոյ կանոն չկայ:

Եւ ճաշակին կարժիւր Հակիթ եւ ճաշ բաղդրիկ:

3. Առաքելոյ Աղաւնոյ շարականին վերջն՝ այսպէս զգրուած ժամադրքին ծայրը.

Եիշատակ է զիրքս Քարձիի Ս. Աստուածածին եկեղեցւոյն՝ Սարբ օղի Օհանն Հօրը Հոգւոյն, ի Թուին Հայոց ՌՃԶ:

ԽԶ.

ՓՈՓՐ ԺԱՄԱԳԻՐՔ ԹՂԹԱՅ ՁԵՌԱԳԻՐ

Ի Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵԳԵՍԵՐ

Քարձի գեղ

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20,5 × 14,5 սնգմ. — ԳՐՈՒ-
ԹԻՒՆ՝ 23,5 × 20 սնգմ.:

Մանօթուքիւն.

Ձուկ յիշատակարան եւ կէսն կայ եւ
կէսն չկայ ժամադրքին: Գիրն ալ անվարժ
ձեռքի գործ է:

ԽԷ.

ՅԱՅՍՄԱՌԻՐ ԹՂԹԱՅ ՁԵՌԱԳԻՐ

Ի Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵԳԵՍԵՐ

Քարձի գեղ

ՌՀԸ (1078) = 1629

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 43,5 × 30 սնգմ. — ԳՐՈՒ-
ԹԻՒՆ՝ 33,5 × 20 սնգմ.:

Մանօթուքիւն.

Յայմաւուրիս գիրն խոշոր է եւ քա-
ւական ուղիղ, քիչ սխալած.

Աստացոյի գրոցս մահտեսի Սողոմո-
նին եւ ծնողացն Սիմեոնին, Կուլիստա-
նին. Տոլվաթին եւ եղբօրն Ջաքարին,
Կիրեւիին եւ Նիկողոսին, Աննային, Մա-
նանդին, Փոռմարին, Վարվարին եւ եղ-
կեղ Կելի գրչի տէր Արիստակէսին:
Բոլոր վերջաւորութեանց ի ստորեւ
վերոյիշատակեալ կերպիւ գրուած է.

Յիշատակարանք.

1. ... եւ միասնական անբաժանելի
երրեակ եւ մի աստուածութեանն Հօր եւ
Որդոյ եւ Հօգոյն սրբոյ. անբաժանելի
սէրութեան փառք յաւիտեանս. Ամէն:
Արդ, Հայցեմք ի քումմէ մարդասիրու-
թենէդ տէր Աստուած, որ ետուր ինձ տա-
նապեալ ողոյս՝ աւարտում սուրբ գրոց
Համառօտ Այմաւուրացս, որ գրեալ կայ
ի սա Հնոց եւ նորոց Աստուածային գրոց
եւ պատմէ... առաքելոցն, Հայրապետաց
եւ վարդապետաց, մարտիրոսաց, կուսա-
նաց եւ ամուսնացեցոց, միանձնաց եւ վա-
նաւորաց եւ թագաւորաց, զինուորաց եւ
զինաւորաց եւ զամենեւեան իւրաքանչիւր
պատուովն պատմէ, իրակատար եւ ան-

թերի, ի լաւ եւ ընտիր օրինակէ ի քա-
ղաքն Կոստանդնուպօլիս, ի Թաղ Պալա-
թու, ընդ Հովանեանս ... Հրէշտակապի-
տին, ձեռամբ մեղաւմած եւ անյարմար
գրչատէր Արիստակէսին, ի Թուվականին
Հայոց ՌՀԸ ... ապիտացդ երամք սուրբք
... եւ մանկունք սուրբ Սիոնի, որք Հան-
դիպիք սժա, կարգալով կամ օրինակելով
յիւնցէք ի մաքրափայլ աղօթս ձեր, գրե-
տացոյ գրոցս զմահտեսի Սողոմոնն եւ
զծնողան զՍիմեոնն, եւ զմայրն զԿուլիս-
տանն, եւ զմայրագիրն Տօլվաթն, եւ զեղ-
բայր մահտեսուն Ջաքարն, եւ զնիկողայից
Կուլիստանն, Նիկողայոսն ... Մանազն
... յարեան մերձաւորան...

Դարձեալ յիւնցէք ի մաքրափայլ ա-
ղօթս ձեր զմեղասաէր գրչիս զտէր Արիս-
տակէս, եւ զմայրն իմ զմարմնաւոր ըզ-
մահտեսի Մկրտիչն, եւ զմայրն իմ Շահ-
խաթունն, եւ զհոգեւոր ծնողան իմ զտէր
Ստեփանոսն, եւ զվերակացու գրոցս
ղաշխարհական զՓանոսն, զծաղկող առ-
րին, ըզկապողն զտէր ... ամէն:

Դարձեալ յիւնց... այլ յաղօթ... ըզ-
մոն... որ ստացաւ թ... զեացն եւ եզ
յիշատակ ի դուռն սուրբ Աստուածածնին
(այս երեւոյն մէջ՝ էջն այս գրուածն էք,
միւս էջն՝ վերէն վար կարուած ու պակ-
սած էք):

ԽԸ.

ՍԱՂՄՈՍ ԹՂԹԱՅ ՁԵՌԱԳԻՐ

Ի Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵԳԵՍԵՐ

Քարձի գեղ

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 11,5 × 8 սնգմ. — ԳՐՈՒ-
ԹԻՒՆ՝ 8,5 × 5 սնգմ.:

Մանօթուքիւն.

Ձուկ յիշատակարան, եւ ամէն կեր-
պիւ կրտատ է եւ անգործածեալի: Գիրը՝
ծնոցս գիր է մանր եւ հատիկ հատիկ:

ԽԹ.

ՍԱՂՄՈՍ ԹՂԹԱՅ ՁԵՌԱԳԻՐ

Ի Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆ ԵԿԵԳԵՍԵՐ

Քարձի գեղ

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 10 × 7,5 սնգմ. — ԳՐՈՒ-
ԹԻՒՆ՝ 8 × 5 սնգմ.:

ԴՄԵՐՈՒՆԻՍԻՈՒՄ

Այս Ստղման յիշատակարան չունի. տպեալ մանր գրի պէս է, բառական աղէկ գրուած. երկու ծայրերն պակաս այնքան սաջ մեղաց իմոց, անօրէնութիւնք իմ բարձրացաւ, քան զգլուխ իմն:

Աս է սկիզբն. միւսները չկան: Վերջինն այսպէս է. չի ձեռք թաղաւորի անօրինիչ և անկէջ վերջ չկայ:

Ե՛.

ԱԿՏԱՐԱՆ ՄԱԳԱՂԱԹԵԱՑ ՁԵՌԱԳԻՐ

ի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

Քարծի գեղոյ

ՈՂԵ (1095) = 1641

ՄԵՆՈՒԹԻՒՆ՝ 20×15 սեղմ. — ԳՐՈՒԹԻՒՆ՝ 14.5×9.5 սեղմ.:

Մագաղաթեայ Ս. Աւետարանիս գրեւորն բառական մաքուն են և անսխալ: Ունի նւսերեայ կարպիանոսի խրատ երկու էջերու վրայ: Ունի կանոն

Ա.	յորս չորեքին
Բ.	» երեք
Գ.	» երեք
Դ.	» երեք
Ե.	» երեք
Ն.	» երկու
Շ.	» երկու
Չ.	» երկու
Ժ.	» երկու
Լ.	» չկայ
Ք.	» երկու
Կանոն Ժ.	» առանձինն իւրաքանչիւր
Կանոն Ժ.	» առանձինն
Կանոն Ժ.	» առանձինն

Ունի պատկեր Մատթէի, անոյ՛ ներկով և ոսկեջրով, բայց անարուեստ. Մատթէի սկիզբն ծաղկեկար և ոսկեզօծ կամարով:

Ունի պատկեր Մարկոսի՝ ըստ վերնոյն: Ունի պատկեր Դուկասի՝ ըստ վերնոյն: Ունի պատկեր Թովմասեանի՝ ըստ վերնոյն: Եւր նկարուած՝ առջեւն աշակերտ՝ որ կը գրէ:

Եկատարանք.

1. Փառք Համպոյ, Համարուն, անբաման, միասնական, եռա՛խուսակ և ան-

թակ տէրութեանն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ, յաւիտեանս, ամէն:

Արդ գրեցաւ և զրաւ առեալ կատարեցաւ սրբազան Աւետարանս և մեծալիբ դանձաւ աստուածային, ի մայրաքաղաքն Կոստանդնուպոլսիս, ի դուռն սուրբ չին: տակապետաց Գարրիէլի և Միքայէլի, և ի Հայրապետութեանն էջմիածնայ տեանն Փիլիպպոսի, և սուրբ յիւրուսայէմայ առաջնորդութեան տէր Աստուածատուր վարդապետին, և ի բռնակալութեանն տաճկաց սուլտան Իպրահիմի, որ յայսմ ամի պատերազմ ունէր ի վերայ Կրէտէս կղզոյն: Եւ ի Թուականութեանն Հայոց ՌՂԵ ամի, ձեռամբ որդոսի և ամենայն մեղաց իրապէս գործողի՝ Ակնցի Ղաղար երիցուն և ցանկացաւ եղեալ սուրբ Աւետարանիս աստուածատուր քրիստոնեայս՝ Քարձեցի խօճայ Կիրեղն և ստացաւ զսա ի Հայալ արղևանց իւրոց, դանձ պատուական և առիթ՝ փըրկութեան և եղ յիշատակ Հոգւոց իւրոց և բարի ծնողացն իւրոց՝ Հաւրն Սիմէոնին և մաւրն Տաւթթի, և որդւոյն Թորոսին՝ որ Հանդուցեալ է առ Քրիստոս, և եղբարցն՝ մ. Սողոմոնին և մ. Զաքարի և կողակցին Մանադին, որ Հանդուցեալ է առ Աստուած, և միւս կողակցին Կիւլիստանին և եղբար որդւոյն Նիկողայոսին, Առամարին, Փարվարին, և որդւոցն Կիրակոսին, Գրիգորին, Բարսեղին, և ամենայն արևանառու մերձաւորացն:

Արդ, երես անկեալ աղաչեմ զամենեւեանդ, ո՛վ քրիստոսազարդ քահանայք և մանկունք սուրբ եկեղեցւոյ, որ Հանդիպիք սուրբ և լուսափայլ Հոգիազարդ Աւետարանիս կարդալով կամ աւրինակելով՝ յիշման արժանի վարկջիք ի սրբաւատոյց և արժանընդունակ յաղաթս ձեր զվերոյգրեալ ստացաւոս սորա զՔարձեցի խոճայ Կիրեղն, և զամենայն առու արևան մերձաւորացն, և Քրիստոս Աստուածն մեր յիւր միասնեալ ուղղեցէք, և թէ՛ զտանի սղալ, որ մէք ոչ իմացաք, բայց զիտնոց մաղթեմ կրկին ուղղել: Եւ աշխատաւորացն ի սա վարձս րարիս տացէ Աստուած, և որք յիշեղ զմեզ որդին Աստուծոյ և զմեզ յիշեցէ, և ուղիւմութեանցն իւր արժանի արացցէ, Հանդերձ ամենայն Հաւատացելովք ի Քրիստոս Երեսնի Տէր մեր, որ է աւրձնեալ յաւիտեանս, Ամէն:

Տետրակիս մէջ արձանագրուած մագապաթեայ ու թղթեայ ձեռագիրներու
 եւ մագապաթեայ հատակտորներու ցուցակը

Ա. Մագաղաթեայ	1351	Աւետարան ի Պօլու
Բ. Թղթեայ		»
Գ. »	1574	Աստուածաշունչ յԱզգ. Առաջնորդարանի
Դ. Մագաղաթեայ		Աւետարան ի Նալլիսան
Ե. »	1292	Աւետարան յԱզգ. Առաջնորդարանի
Զ. Թղթեայ	1648	Շարական »
Է. »	1468	Աւետարան յեկեղեցւոյ Նիկոմիդայ
Ը. »	1625	Աւետարան »
Թ. »		Մեկնութիւն Մատթէի յերուսաղէմ
Ճ. »	1626	Աւետարան յԱզգ. Առաջնորդարանի
ԺԱ. »		Խորհրդատետր »
ԺԲ. »	1574	Աւետարան յԱզգ. վարժարանի Նիկոմիդայ
ՃԳ. »	1625	Աւետարան » »
ՃԴ. »		Ճաշոց գիրք » »
ՃԵ. »	1581	Մեծ մատուց » »
ՃԶ. »	1584	Տաղարան » »
ՃԷ. »	1432	Փոքրադիր մատուց » »
ՃԸ. »		Փոքրիկ շարական » »
ՃԹ. »	1465	Ճաշոց՝ քայքայեալ յԱզգ. Առաջնորդարանի
Ի. »		Սաղմոսիկ՝ քայքայեալ » »
ԻԱ. Թղթեայ		Տես. Աստուածաբանութիւն Աւգերեանի ի վարժարանի Նիկոմիդայ
ԻԲ. Մագաղաթեայ		Աւետարանիկ յեկեղեցւոյ Նիկոմիդայ
ԻԳ. Թղթեայ	1605	Փոքր մատուց յԱզգ. Առաջնորդարանի
ԻԴ. »	1469	Մատուց » »
ԻԵ. Մագաղաթեայ		Աւետարանիկ յեկեղեցւոյ Ջէնիլէրի
ԻԶ. Տօնացոյց մագաղաթեայ եւ մէկ թերթ մագաղաթի պահպանակ (1579)		Տօգրամատի Բիսկեանցի Գր. աղայի մօտ յէւմէ
ԻԸ. Մագաղաթեայ		Աւետարանիկ ի Պէնկլի Պրուսայի
ԻԸ. Մագաղաթի մէկ թերթ լատիներէն յԱզգ. վարժարանի Նիկոմիդայ		
ԻԹ. Թղթեայ փոքրիկ Տօնացոյց (1631) յԱզգ. Առաջնորդարանի		
Լ. »		Կրօնական հարց պատասխանիք յԱզգ. Առաջնորդարանի
ԼԱ. »		առձեռն մատուց » »
ԼԲ. »		» Շարական » »
ԼԳ. Թիւ 1 մագաղաթեայ հատակտետր		» »
ԼԴ. Թիւ 2 »		» »
ԼԵ. Թիւ 3 »		» »
ԼԶ. Թիւ 4 »		» »
ԼԷ. Թիւ 5 »		» »
ԼԸ. Թիւ 6 »		» »
ԼԹ. Թիւ 7 »		» »
Ս. Թղթեայ Ասամաուր յեկեղեցւոյ Գըլլըճ քիւղի		

ԽԱ.	»	Խորհրդատետր	յեկեղեցւոյ	Գլուճ	գիւղի
ԽԲ.	»	Աւետարան	»	»	»
ԽԳ.	»	Մաշտոց	»	Քարձի	զեղջ
ԽԴ.	»	Աւետարան	»	»	»
ԽԵ.	»	Ատենի ժամագիրք	»	»	»
ԽԶ.	»	Փոքր ժամագիրք	»	»	»
ԽԷ.	»	Բայամաւուր	յեկեղեցւոյ	Քարձի	զեղջ
ԽԸ.	»	Սաղմոս	»	»	»
ԽԹ.	»	Սաղմոս	»	»	»
Մ.	Մագաղաթեայ Աւետարան 1641 յեկեղեցւոյ Քարձի զեղջ				

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մագաղաթեայ ձեռագիրք

	Թուով
Աւետարանք՝ մեծադիր եւ փոքրադիր	7
Տօնացոյց՝ մագաղաթի հատակոտորովը	1
	8

Թղթեայ ձեռագիրք

Աւետարանք՝ մեծադիր եւ փոքրադիր	8
Աստուածաչունջ	1
Շարականք	3
Մեկնութիւն Մատթէի	1
Խորհրդատետր	2
Ճաշոց գիրք	2
Մաշտոցք	6

ՆԻՎՈՄԻՏԻՈՅ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ Լ ԲՊ ՁԵՌԱԳՐԻ

«ԿՐՕՆԱԿԱՆ ՀԱՐՑ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ» ԳՐԲԷՆ ՔԱՂՈՒՄԻՄ

էջ 59—66

Յիշատակարան Աստուածաշունչ գրոց

Տէր Առաքել զիտոյ Սիւնեաց,
 Զուրկ եւ թափուր յամէն շնորհաց.
 Շարագրեցի զկարգս զրաժաց,
 Աստուածաշունչ կտակարանաց,
 Վասն այս յայտնեմ զրանս զրաժաց.
 Զհին եւ զնոր կտակարանաց,
 զի յուսածիս անուանս կարգաց
 Եօթանասուն եւ Բ զրաժացն:
 Քառասուն եւ յորս Հին կտակին
 Եւ Ի՛նչ նորոց կարգին,
 Աստուածաշունչ կուին նոքին
 Զոր խօսեցաւ Աստուած Հոգին:
 Նախ է Հինգ զիրք Մովսիսական,
 Մնունդք եւ Ելք եւ Ղեզական,
 Թիւքն եւ Երկրորդ օրէնք որ կան,
 Արարք աշխարհի ընդհանրական:
 Վեց աւրճնութիւնքն Յակոբայն,
 Վերայ որդոցն բաժան,
 Զի աւրճնութիւնքն որ յԱղամեան,
 Որդոց որդիս կարգաւ կ'երթան:
 Եօթերորդ կարգն որ, յետ նոցա,
 Ի զիրք Յետաւ որդոյ Նաւեան,
 Ը. դատաւորքն որ յետ նորայն
 Թ. Հոռութ մայրն Յովբէթայն:
 Սա մայր կոչի մեծին Դաւթեան
 Կին Բոյսի մայր Յովբէթա,
 Որ ծնաւ զՅեսսէ տղա,
 Յեսսէ ծնաւ զԴաւիթ արքա:
 Թապաւորութեանց զիրք չորեքին
 Սաղմուն եւ Դ զիրք Սողոմոնին
 Յոր եւ Սիրաք սրբահոգին
 Սենեկապետն Սողոմոնին:
 Այս Ի զիրք Հին կտակին,
 Որ մինչեւ այս վայր զիմեցին
 Ռեւա աշուրիկ բաժանէին,
 Թապաւորութիւնք ազգի նոցին:

Ռորովամ որդի Սողոմոնին,
 Թապաւոր Ելաց բոլոր ազգին,
 Ռորովամ ծառայն սոցին,
 Որ փախեալ յահէ Սողոմոնին:
 Սա յեզրիպտոս փախեալ մնաց,
 Մինչ Սողոմոն արքայն ննջեաց
 Յետոյ եկեալ Հակառակեաց,
 Ժ. ն ցեղին Թապաւորեաց:
 Քսանուսին զիրքն յնսային,
 Ի. Բ երեմեային,
 Ի. Գն Եզեկէլին
 Ի. Երկոյտառանքն Ի միասին:
 Այս Լ եւ Ե. յինին
 Դրեանք Հնոյ կտակարանից
 Մինչ ցայս վայր, կարգն երկրորդին,
 Մինչդեռ կային Իւրեանց երկրին:
 Յետ այսորիկ գերի գնացին
 Ի Բաբելոն բոլորովին,
 Հ. Բ տարի անդ մնացին,
 Տէր այց արար յիգոր դարձին:
 Իսկ երրորդ կարգն որ սկսանի
 Բ. Եգր Աղթ առաջին,
 Որ այլ եւ այլ ժամանակի,
 Անուամբ միայն Համարձակին:
 Մինն Ի յազգէն էր Յուդային
 Մինն Ղեզական քահանային,
 Յետ զԲաւթեան Բաբելոնին
 Ըզկտակարանքն սոքա զրեցին:
 Հին եզրուած էր Սաղաթիէլ,
 Որ ծնաւ որդի Զօրաբարէլ,
 Հոգով յցեալ Սաղաթիէլ,
 Զեզձեալ զրեանսն նորոգէին:
 Զկտակարանքն որ ընդ նոսին,
 Ի Բաբելոն կորեան նոքին,
 Սոցա յայտնեաց Աստուած Հոգին,
 Որ զամենայն նորոգեցից:
 Եւ Բ. զիրք Մնացորդին,
 Զոր վերստին սոքա զրեցին:

Ինացորդք մասն այն պահն սոքին,
 Որ յետոյ սոքա զմնացեալսն գրեցին:
 Դանիէլ եւ Նսթերին,
 Բարութ եւ Մակարայեցին
 Տուրիդ, Յուդիդ, գիրք Նեմին,
 Որ Երրորդ կարգն աւարտեցին:
 Այս են զընեմք հին կտակին,
 Կէրք գլխովին,
 Աստուածաշունչ կոչին սոքին,
 Ջոր խօսեցաւ Աստուած հոգին:
 Սաղաթիկ այր ցանկալի
 Եւ հինի ընտրեալ այր ընդ նմին
 Ձեղծեալ զընան կտակարանին,
 Եւ օր զամենն գրեցին:

Յետ սոցա նոր կտակարանին,
 Եւ գիրք անուանին,
 Որ Գալատեամբն Աստուածին,
 Չայս խօսեցաւ Աստուած հոգին:
 Նախ Դ. գլուխ աւետարանն,
 Թուղթ Պաղոսի շորեքտասան,
 Առաքելոց գործքն, որ զրեցան,
 Եւ կաթողիկէքն ամենեքեան:
 Այլ եւ տևիկն Յովհաննու,
 Որ յայտնեցաւ նմա Սատուածոյ,
 Էր ընդ երարան աւուր մահու,
 Որ զրեցաւ Պատմոս կղզոյ:
 Այս ի՞նչ գիրք ըստ կարգին,
 Կտակարանաց նորոյ ուխտին,
 Աստուածաշունչ կոչին սոքին,
 Ջոր խօսեցաւ Աստուած հոգին:

Աստ, Հի լեզուին,
 Նոյնքան թուով գիրք ընորհաց հոգին,
 Ձի ամենայն ազգ առանձին,
 Հայցեն զընորհս աստուածային:
 Այս լինելոց է յետ Նեոին
 Որ գան ի հաւատս ամենեքին
 Եւ ամենայն լեզու խոստովանին,
 Դժբխտոս Աստուած դանձն երեքին:
 Եւ ցաւք հոգոյ այրքան թուով
 Ջոր տէր յայտնեաց յայս խորհրդով,
 Ենթանակին ի չափով
 Թողցէս զմեզս եղբորն յովով:
 Վասն այն ետ զընանք այնքան թուով,
 Որպէս ծաղկունք դեղ կազմելով:
 Եւ թէ մահու մեղքն չափով,

Ենթանանկին է թուով,
 Ի հարիւր Ե շից համարով,
 Ջոր Դ. տարերք աւետորդով,
 Սիշտ մեկանչեն ընդ խորհրդով
 Թէ եւ բանել եւ թէ գործով:
 Արդ այս տեղ ընորհաց չափով,
 Ջոր մեկանչեմք նոյնքան թուով,
 Ձի սրբեցութ յախտէ հոգով,
 Ի սուրբ վրոց ունկն դնելով:
 Արհնութիւնք նմա յովով,
 Այժմեան եւ անցեալ ժամանակով,
 Հոգով, մտք եւ խորհրդով,
 Որդոյ ընդ Հօր եւ սուրբ Հոգով:

Յիշատակարամ Շարակնոցի Ստեփանոսի
 երեցել

Որք զծորանս հոգոյն արբին,
 Ձեարականսն ողբալ գրեցին.
 Նախ մեծն Մեսրոպ սքանչելին,
 Ձկարգ բոլոր աղուհային:
 Ձարշարանացն աւագ չարթին,
 Խորհրդով լի եւ անթերին
 Մեծն Սահակ պարթեւագին,
 Որ էր պտուղ Լուսաւորչին:
 Իսկ զՅայտնութեան եւ զՅարութեան
 Սուրբ յայտեան քառասնօրին,
 Ձմեծացուցէքն ընդ փոխման կուտին՝
 Մեծն Մովսէս Խորենացին:
 Ըզպատկեր սուրբ Պէնտէկոսդին
 Եւ զկարգ մեծի վարդապետին,
 Ձմարդարէիցն եւ զմկրտչին
 Ձառաքելոցն եւ զԱնդունին
 Եւ զԳրիգորին, զԹադաւորաց եւ զԹոռ-
 Շիրակացուն ոմանք ասեն, [ներին
 Այլք Մովսէսի քերթով վեհին,
 Ձխաչի կարգ բոլորովին,
 Այլ եւ մանկանցն բազումք ի նմին,
 Սահակն, որ գնաց ընդդէմ Մահճեղին,
 Նայ որ մեռաւ ի Խառանին:
 Ըզմարտիրոսացն եւ զհանգստեան,
 Պետրոս Ջրադարձ սրբահոգին:
 Եւ զարհնութիւնս որ մեծ կոչին
 Սուրբ Ստեփանոսն Սիւնեցին:
 Ապա մնաց պատկեր վառին
 Շինեալ ներսս Կլայեցին,
 Ըզկիրակիքն աղուհայցին

Սա ասացեալ խորհրդով լին։
 Այլ եւ պատկեր եօթանասին
 Եւ զՅոհանու մեծ քարոզին,
 Զվերջի հարցն ծաղկազարդին,
 Սա ասացեալ ըստ խորհրդին։
 Այլ եւ ղխորհուրդ հարց կարապետին,
 Զմարգարէիցն նոյն դունին,
 Զպատկեր իննեակ դասուց վերին,
 Սա յարմարեալ յոյժ նմանն,
 Զվեց պատկեր Պէտէկոսդին
 Զկրկէ կանոն վարդապետին,
 Զերկու պատկեր փոխման կուսին
 Խորհրդապէս շարեալ սմին,
 Ընդ Ղեւոնդեանցն պատկերին,
 Զնորահարա՛ Վարդանին,
 Զայսօր անճառ մեծ պասեքին
 Եւ ղնորոգողն ընթեր նմին,
 Զարարչականն եօթն օրին,
 Զկատուած անեղն ընդ արեւելին,
 Զերգ երրորդի ժամու խային,
 Զվեցերորդին եւ զհնեկէին,
 Զսայեա սիրովն ընդ իւր սմին
 Զ'ի քէն հայցեմքն երեկոյին,
 Ծնորհա մեղ Տէր զբան տեսողին
 Եսախաս մարգարէին։
 Զայսօր յարեաւն աւաղ զպտկին
 Եւ ղպատկեր նոր կիրակէն
 Մեծ Ներսէս Լամբրոնացին
 Որ գիտապետն է Տարսնին։
 Զաւաղ տօներն ամենեւին,
 Մեծն Յոհաննէս յՕմեքցին։

Զանձինք եւ զհարց Հոփսիմէին,
 Տէր կամիտաս սրբաճողին,
 Իսկ զանկիդրն Մանդակունին,
 Եւ ղՄաղիստրոսն ընդ պատկերին,
 Զխորհուրդն անճառ եւ զմեծաշրջն,
 Վկայասէր այն մեծ ազգին,
 Զանձինք մեծի կարապետին՝
 Դրիգորիոս Սկեւոցին։
 Եւ ղերգեցէք ծնողաց կուսին,
 Մեծն Յակոբոս կյայեցին։
 Զոր նախմացն սուրբ Սարգսին
 Եւ անսաման ծովէն վերին
 Եւ ղԹարգմանչացն զաւրհնութիւն
 Վարդան տէլէտն Հայաստանին,
 Եւ ղնեքսէսի մերոյ մեծին
 Զխոտաբուղացն որ պարոնին,
 Զանձինք մերոյ Լուսաւորչին,
 Մեծն Յոհաննէս Եզնկացին։
 Զայրապետացն եւ ղՅակոբին
 Նոյն Յոհաննէս Եզնկացին,
 Որ մականունն Պլուզ կոչին։
 ԶՂեւոնդեանց մանկունքն մին,
 Մին Սարկաւազ որ Հաղբատին,
 Զսրբութիւնն սրբոյ խաչին
 Մեծն Ստեփաննոս Ապարանցին,
 Եղբօրորդի մեծի Դաւթին.
 Եղբայր Մանկլիկ Տգնաւորին,
 Այս Շարականքս ընդունելի,
 Յեկեղեցիքս Հայաստանի,
 Եւ որքան զայս են աւելի
 Ի անպետաց եւ խոտելի։

ՑՈՒՑԱԿ ԶԵՌԱԳՐԱՑ
ՎԻՃԱԿԻՆ ՆԻԿՈՍԻԴԻՈՅ

ՊԱՏՐԱՍՏՈՒԱԾ

ՄԿՐՏԻՉ ՎԱՐԴ. ՍՂԱԽՆՈՒՆԻԷ



ՅՈՒՅԱԿ ԶԵՌԱԳՐԱՅ

ՎԻՃԱԿԻՆ ՆԻԿՈՄԻԳԻՈՅ

Քանի՜ մը տարի առաջ, ռաբացեալ Թորոս Ազատեանի շնորհիւ, բազմաթիւ հիմ ու մոր գրչագիրներ, տնտրակներ եւ դիւանական թուղթեր ձեռք բերի կ. Պոլիս, որոնց մէջ էր նաեւ կապալտ, գծաւոր դպրոցական սովորակեալ թուղթ տնտրակի մէջ, մանուշակագոյն մեկամով, շեղագիր գրուած այն ատեն դեռ վարդապետ Մկրտիչ Արքազան Ազաւնունիի՝ Նիկոմիդիոյ վիճակին հայերէն գրչագիրներու այս ցուցակը:

Այսօր, երբ այլեւս Նիկոմիդիոյ բարգաւաճ ու բազմաթիւ հայկական վիճակը գոյութիւն չունի, այս ցուցակը շատ քանկագին մասունք մըն է. երբ մանաւանդ հոն ցուցակագրուած գրչագիրներն ալ ըստ երեւոյթի ի սպառ կորսուած են:

Հրատարակելով այս ցուցակը՝ մախ մեր բանասիրութեան եւ պատմագրութեան տրամադրած կ'ըլլանք թանկագին միւթ, եւ յետոյ յիշատակի փոքրիկ փրկելի մը դրած կ'ըլլանք իմ եւ Արմաշի մատակարար մեծ հայրիկիս Կարապետ Քիրտեանի սիրելի ու թանկագին բարեկամ՝ Մկրտիչ Արքազան Ազաւնունիի խնկելի շնորհին:

Ցուցակը կը հրատարակենք ինչպէս որ գրած ու պատրաստած է ռաբացեալ բարեկամս, առանց որ եւ փոփոխութեան: Նոյն տունն 1966ին կ. Պոլիս այցելութեանս՝ Թօփ Գաբու Սէրայի թանգարանին ձեռագրաց մատենադարանին մէջ գտայ ճանի մը հայերէն ձեռագիրներ, որոնք մաս կազմած են Ազաւնունի Արքազանի ցուցակագրած ձեռագիրներում: Այդ ձեռագիրներուն մասին, կ'աւելցրնեմ ցանկին վերջը՝ այն ծանօթութիւնները, յիշատակարանները, որոնք ես անձամբ նշանակեցի 1966ին Թօփ Գաբու Սէրայի մատենադարանը այցելութեանս: Թէ ի՞նչպէս այդ ձեռագիրները Նիկոմիդիոյ շարաքացեալ եկեղեցիներէն եւ հանգած հաստատութիւններէն Թօփ Գաբու Սէրայի մատենադարանը եկած են՝ ինծի ծանօթ չէ, ոչ ալ ե՞րբ կամ որո՞ւ կողմէ հոն բերուած ըլլալը գիտեմ: Նկատել տանք որ Թօփ Գաբու Սէրայ բերուած ձեռագիրները գլխաւորաբար Նիկոմիդիոյ ձեռագիրներ են:

Գ. ՔԻՐԻՏՏԵԱՆ

Ա

Աւետարան թղթեայ

Կը գտնուի ի Ս. Սարգիս եկեղեցւոյ Գրեմարիի ի Կէյվէ. այս ձեռագիրն գրած է Ներսէս անուամբ մի երէց Կարնոյ Դփնիկ անուն մի գիւղի մէջ. Հայոց ՌՅԲ (1593) թուականին. սոյն ձեռագիրը չէ վարդարուն, այլ պարզ թղթի վրայ Հասարակ գրերով գրուած. Հասանաբար

Գրեմարիի գաղթականութիւնն իւր հետ բերած է Կարնոյ Դփնիկ գիւղէն:

Բ.

Աւետարան թղթեայ

Այս ձեռագիրն կը գտնուի դարձեալ Նիկոմիդիոյ վիճակին վերայիւնայ Գրեմարի գիւղի Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ. գրուած է ի ձեռն Այնթապցի Սարգիս հ-

րիցու: Հայոց ՌՇԵ (1626) թուականին. այս ձեռագիրը ո՛չ զարդ ունի և ո՛չ ալ գրերու սիրունութիւն:

Գ.

Տօնացոյց մազադաքեայ

Կր դտնուի Կէլվէյի էմէլ գրիգօսի Գրիգոր Տօղրամաճևանի մօտ (Բէնկեանօցի): Թորոս նպիսկոպոսի մը ինդրանօք մազադաթի մը վրայ օրինակած է Մակար անուն մի վարդապետ, որոյ վախճանմամբն րստ յիշատակարանի, կէս կր մնայ ընդօրինակութիւնն, զոր կը շարունակէ Գրիգոր անուն մի երէց՝ աչակերտ վերոյիշեալ Թորոս նպիսկոպոսի, ինչպէս որ ալ կիսով կը տարբերի սոյն տօնացոյցին գրերու ձեւովն ու զկղեցկութեամբն, ընդօրինակուած է Հայոց ՌԻԷ (1578) թուականին Տարօնոյ Բալու րստած գիւղին մէջ: Տօնացոյցս բոլորովին մաղաղաթ է, և կողքերն տախտակէ շինուած են, և ծայրը շէղակի ունի ձեռագիր մաղաղաթեայ Անետարանի երեք թրթթեր՝ երկաթապիբ տառերով:

Գ.

Մատոց թղթեայ

Կր դտնուի այժմ Կէլվէյի Գուրգյէլին գիւղի մէջ, յիշատակարան չունի, միայն րստ վկայութեան ծերունազարդ Տ(Էր) Վաճան Գաւանայի (մեռած 1861 թուականին) 161 տարուան հնութիւն ունի եղեր. այս ձեռագրոյն վրայ այսօրայի գիտեմք:

Ի.

Անետարան թղթեայ

Կր դտնուի այժմ Նիկովիդիոյ քաղաքին Ս. Աստուածածին եկեղեցւոյն մէջ. սոյն ձեռագիրն ընդօրինակուած է ԶԺԷ (1468) թուականին Հայոց: Վերջին կաթողիկոսութեան ընտրութեան ժամանակ (1892 Մայիս) երբ Նիկովիդիոյ վիճակին եկեղեցական պատգամաւոր՝ Գեր. Տ. Ստեփանիս Ս. Արքեպիսկոպոսը և ոչ խարական պատգամաւոր Մեծ. Մ. Գասպար Էփէնտի Տ. Թ. Գասպարեան Տփլիս կը պատահին Տ(Էր) Գրիգոր քաճաճայ Մանդակունին սոյն ձեռագիրը նուէր կու տայ, Զեռագիր Խորհրդատւորի մը հետ, Նիկովիդիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ համար: Սոյն Անետարանին ծայրը կայ մի յիշատակարան, յորմէ կ'իմացուի թէ՛ Պոլսէի նպիսկոպոս անուամբ մի անձ կը կազմէ այս ձե-

ռագիրն և ապա ԹՃԻ (1501) թուականին կը զնէ Պէնկար իշխան Սարգիս Կոթողիկոսի ժամանակ: Վերջին յիշատակարանին գրիչն է Շմաւոն անուամբ մի քաճաճայ:

Զ.

Անետարան թղթեայ

Ըստ յիշատակարանի այս ձեռագիրն ընդօրինակուած է Կալ տայ (Կալ տեղ) րստած գիւղը, ձեռամբ Ղազար գրէ՝ Երկանկուղցի (Երկանքնկուղցի - Յ. Բ.) ժակնուամբ: Բայց կազմարարութիւնն րրած է Յովհաննէս նպիսկոպոս և ծաղկանկարութիւնն ալ Ամգեցի Յովհաննէս երէց: Միշտակարանին գրողն յայտնի չէ և ոչ ալ ձեռագրոյն թուականն: (Մաղկոյր ծառիօք է փէ. դարուն սկիզբը - Յ. Բ.): Մանաւոր երկու յիշատակարան ալ ունի. առաջնով կը հասկցուի Կեսարիոյ Մամրեղաւ Աղրակ գիւղէն Տաուր անուամբ մին կը զնէ այս Անետարան, Գրիգոր քաճաճայի մը յորդորանօք, որուն ձեռքովն Տաուր Կալի Ս. եկեղեցւոյն կը նուիրէ այս ձեռագիր Անետարանը (Աղրակի եկեղեցւոյն ըսել կ'ուզէ):

Երկրորդով կը հասկցուի որ քաճաճայի մը ձեռքով (անունն անընթեանի) այս ձեռագիրն ՌԺԻԹ (1680) թուականին Սպարի 10ին Շարաթ օր նուէր կը լինի Նիկովիդիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ:

Է.

Անետարան թղթեայ

Սոյն ձեռագիրն դարձեալ կը դտնուի Նիկովիդիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Եիշատակարան չունի, և ոչ ալ կարող էմ ըսել այլ ինչ այս ձեռագիրն վրայ: Միայն սա կրնամ ըսել՝ թէ չէնք շատ զեղեցիկ է, գրերն արտակարգ մաքուր են, ծաղկանկարութիւնն ալ ոսկեփուր է, միայն տեղ տեղ ոսկի ջուրն սեւանալու վրայ է: Սոյն Անետարանն փոքրագիր է և աղբն ալ չորս Անետարանաց համարարառն ունի սիւնակներու մէջ: Վերջին աստիճան մտքուր դրուած է տօնացոյց տառաթաղի:

Ը.

Անետարան թղթեայ

Այս ձեռագիրն գրուած է Հայոց ՌՇԵ (1626) թուականին Ղարապաղ կոչուած քաղաքին մէջ, ձեռամբ Մոլլոսցի Յովսէփ Երիցու: Եիշատակարանն և ձեռագիրն միեւնոյն գիրն ունին: Յովսէփ երէցն իր

բնակչի՝ որ ըստ յիշատակարանի Թովմա անուամբ վարդապետի մը օրինակին ընդօրինակութիւնն է Լեզեր. Ձեռագիրն պատճառն է Ս. Երուսաղէմայ մէջ, ընդ Հոմփանեա Կաթարիչ Վիթի, ի վանա Ս. Փրկչի:

ժԻ.

Աւետարան քղբեայ

Կը գտնուի այժմ վիճակիս Մէրտէկէօյ գիւղի մէջ, ի Ս. Կարապետ եկեղեցւոյ: Այս ձեռագիրն՝ ըստ յիշատակարանի գրուած է Ընկելենի Մանճրլըի գիւղի մէջ՝ ընդ Հովանեա Ս. Թորոսի եւ Ս. Յակոբայ, ի Թուին Հայոց ՌժՁ (1567), ի Թագաւորութեան Տաճկաց Սուլթան Սէլիմին, եւ ի Հայրապետութեան Հայոց Տէր Խաչատուրին: (Ստոյ, Ձէյթունցին — Բ: Ք:): Յիշատակարանին մէջ կը յիշուի Յովհաննէս անուն մի երէց՝ Հաւանական գրողն սոյն ձեռագրին. Ալիքսիանոս անուամբ մի վարդապետ եւ Յովսէփ Եպիսկոպոս: Այս ձեռագիրն կը ստանայ Ղուիճան անուն մին՝ որ յիշատակ կու տայ Սևտաստիոյ (Սեբաստիոյ) Դալլինիկ րումած գիւղին: Բայց չի գտնուիր թէ ինչպէս Մէրտէկէօյ փոխադրեր են: Այս Աւետարան երկրջեան է, զորն ալ տակաւ առ տակաւ կորսնցնելու վրայ են իրենց փայլունութիւնը: Մարդանկարութիւնն ալ հազուադէպ է:

ժԵ.

Աւետարան քղբեայ

Սոյն ձեռագիրն կը գտնուի այժմ վիճակիս Մեծ Նոր-գիւղի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ: Սոյն ձեռագրոյն սկիզբի ե վերջի ծայրի թերթերն կը պակսին, եւ եթէ յիշատակարանն որ ունէր հաւանաբար ալ թէրթերուն մէջ կրնայ ըլլայ: Յիշատակարանն ունենայովն՝ հետեւեալ անստոյգ կը մնայ ե՞րբ եւ ո՞ր գրուած լինեն, միայն թէ Ղուկասու Աւետարանի սկիզբը կը յիշուի մի Սարգիս անուն սարկաւապ՝ որ ինքն իբր տաղոց ձեռագրոյս, կը պատուիրէ զինքն յիշել ի տէր: Ասկէց զատ ուրիշ տեղեկութիւն չունինք այս ձեռագրին հետեւեան վրայ:

ժԶ.

Աւետարան քղբեայ

Դարձեալ կը գտնուի Մեծ-Նոր-գիւղի Ս. Կարապետ եկեղեցւոյ մէջ: Երկրջեան է եւ տակը ունի համաբարբառ մը: Ձեռագրոյս ծայրը կցուած է մի ընդարձակ

յիշատակարան՝ յորմէ կը հասկցուի թէ այս ձեռագիրն գրուած է Հայոց ՌՁ (1631) թուականին Նոյեմբեր ԻԲ (22)ին Բարդուղիմէոս մահանայի (քահանայի) մը ձեռք Կոստանդնուպոլսոյ մէջ: Սոյն յիշատակարանն գրուած է ձեռագրոյն աւարտելէն անմիջապէս վերջ, նոյն իսկ ընդօրինակող Բարդուղիմէոս քահանային ձեռով: Ըստ յիշատակարանիս Ս. Էջմիածնի Մովսէս Կաթուղիկոսի եւ Կ. Պոլսոյ Ջաքարիս Պատրիարքի ժամանակ եւ զամէն յայտ ընդօրինակութիւնը: Բացաստի, կը յիշուին Առաքել, Ալիքսան եւ Գրիգոր Կամախեցի անուամբ վարդապետներ, յորոց առաջինն գրավարութիւն, երկրորդն ծաղկանկարութիւն եւ զլիսագիր եւ երրորդն ալ Թանաք եփել սորվեցուցած է այս Բարդուղիմէոս քահանային, որ յիշատակարանին ծայրը ունի մի անկանոն չափի, գրութիւն, որոյ սկզբնական տառերն կը կազմեն Բարդուղիմէոս Բախնայի Է քան: Գրերու տրամաբանութիւնն ակն յանդիման կ'երևի, զուցէ ընդօրինակողին շուտ աւարտելու փափաքէն ծագում առած ըլլայ: Ինչ որ ալ ըլլայ չէ գնահատելի ձեռագիրն մը:

Սոյն ձեռագիրն առջեւ կայ նաեւ մի այլ յիշատակարան, յորմէ կը հասկցուի թէ եղիազար անուամբ մի վարդապետ կը գրէ. «Եւ Եղիազար վարդապետս որ էր ինկրէն Գանջաու որ եկի ի գեղս որ գոչի Գուգուս էր թվ(ական) ՌժՁԴ (1735) եւ ի յամսեանն ի (20) Հայոց Նոոի Լ (30), որ բազում հիւանդութիւն քաշեցի»: (Վիճակիս Պաշարու Միջագեղի անունն է Գուգուս՝ որ մինչեւ հիմա կայ նաեւ ձեռերն կը գործածեն, ըստ տեղական աւանդութեան, ժամանակին Պաշարու Մեծ-Նոր-գիւղն եւ Օրթապեղն միացեալ են եղիւր. Ժորոյ մը րաժնուած: Ի վերջոյ Նոր-վեղցիք քաժնուելով զատ գիւղ մը չինքն են եւ զիւրն ալ յորջորջեր են Նոր-Գիւղ: Հաւանաբար Գուգուս երկու գեղին միանալուամբ կ'ըսուի Լեզեր, եւ այս ձեռագիրն ալ ընկան է որ կը վերաբերի այս երկու գիւղերուն՝ որ մէկմէկէկ կէս ժամ հեռու են):

ժԷ.

Աւետարան քղբեայ

Դարձեալ կը գտնուի վիճակիս Մեծ-Նոր-գիւղի մէջ: Սոյն ձեռագրին ծայրը կը տեսնուի մի յիշատակարան, յորմէ կը հասկցուի թէ Ս. Էջմիածնի Մելիքսեդէկ Կաթուղիկոսի եւ Ջաքարիս եւ Յովհաննէս Պատրիարքներու ժամանակ ընդօրինա-

կած է Յովակիմ անուն մի քահանայ Կ. Պոլսոյ մէջ, Հայոց ՌԿԶ (1617) թուակա-
նին: Ամէն պարագաներով կը նմանէ վե-
րի ձեռագիր Աւետարանին: Յիշատակա-
րանին մէջ ընդօրինակողն կը յիշէ Տէր
Աբրահամ տնտէս մի երէց՝ յորմէ,
ինչպէս ինքն կը խոստովանի, ուսած է
սոյն գրչութեան արուեստը:

ԺԼ

Գիրք Պատմութեան
Ընդդէմ Փափազաշտից

Այս գիրքը լատիներէն չարագրեր է մի
կարդինալ, ինչպէս ձեռագրոյն առջեւն կը
կարդանք: Տպագրուելէ ինչանտայի Ծի-
լմէնէնի Յայայ քաղաքին մէջ 1646 Փրկ-
չակն թուականին եւ ապա լատիներէնէ
ի հայ թարգմաններ է խօսա Խոսաք Ապէն-
սալ երրանցին ըստ ինչորոյ մանկավարժ
եւ նոտար Մատթէոս տպագրիչի Հայոց
ՌՄԼԴ (1785) թուականին: Ձեռագրոյն
դիրն Հայերէն եւ խօսքն տաճկերէն է:
Վերջն ալ կը գտնուի մի յիշատակարան
հետեւեալ կերպով. «Գաղափարեցաւ ի
գրօսանս գերամեծար իշխանապետի Աղ-
պիս մերոյ մահտեսի Աբրահամ քարեւէր
Ամիրայի փեսայ պարոն Յօհաննէ՝ որոյ
տաջէ տէր կնանն երկարս եւ խաղաղա-
կանս, Ամէն: Ձեռամբ Բրաբիոն նոտա-
րին: Սոյն ձեռագիր, ինչպէս թուակա-
նէն յայտնի է, նոր է, եւ տպագրութեան
ծագմանէ շատ վերջ ընդօրինակուած, եւ
չէ զարդարուն եւ զեղեցկագիր, այլ մա-
քուր եւ որիչ գրերով զրուած չարայար-
ուած, Հին ձեռագրաց վերջին հատակո-
տորն կրնայ համարուիլ:

ԺԾ.

Աւետարան մագաղաթեայ

Ըստ վկայութեան Զէնկիլէր գիւղաց-
ոց բերում է Ծոջանէի ի Զէնկիլէր:
Սոյն ձեռագիրն՝ որ մեր տեսածներուն
պատմականագոյնն է, ծայրը յիշատա-
կարան մը միայն ունի. որուն կէսն ին-
կած է եւ քնաւ չհասկցուիր թէ ո՞վ գրած
է, ո՞ր եւ ե՞րբ գրուած է, միայն թէ
սոյն կէս յիշատակարանին յուսանցքին
վրայ գրուած է հետեւեալ ծանօթութիւ-
նը. «1876 Վ. Ե. 8 Ծոջան գիմաքի երե-
սին վերջ»՝ թուականն գրուած ոսկեզրով,
յամի Տեառն 1048. Սիս Պաղտիկ, Գժուար
կ'երեւի: Սոյն ձեռագիր փոքրագիր է եւ
երկրինան, չորս Աւետարաններ կը պա-
րունակէ, եւ յուսանցքին տակ ունի համ-
բարբառ մը, զրերը փոքր են, եւ ամենա-

մաքուր եւ առանց տառասխալի, զեղեցիկ
եւ զոյնզոյն պատկերներով եւ գրերով
զարդարուած է, ձեռնա մասամբ անթերի
եւ յիսպէս ոսկով շինուած: Ձեռագրին
առջեւի քանի մը թերթերն ինկած են:
(Կ'երեւայ թէ դրագիրը ազադաթեայ եւ
սակայն ոչ երկաթագիր եղած է, որով
1048 ո՛չ թէ յամի Տեառն, այլ Հայոց
պէտք է նկատել, որով գրչագրեր Զրիս-
տոսի 1599էն ըլլալու է — Գ. -):

Ի.

Աւետարան քղբեայ

Կը գտնուի այժմ վիճակին Պարտի-
զակի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ: Այս ձե-
ռագիր Աւետարանն իր վերջն ունի երկու
յիշատակարան Առաջնով կը հասկցուի
թէ Վարդան անուն մի քահանայ ընդօր-
նակած է այս ձեռագիրը գիւղի մը մէջ.
(Գիւղին անունն չկրցայ կարգալ) ՌժձԶ
(1677) թուականին: Յիշատակարանս
զազափարոցին ինքնագիրն է:

Երկրորդով կը հասկցուի թէ այս
ձեռագիրը յիշատակ եղեր է Կոտուցի միա-
րան Պաղածուցի Յովհաննէս Եպիսկո-
պոսին եւ Բաղիշեցի Իսաքի որդի Վա-
րդանին, թէ Կարենոյ մէջ Կարապետ ան-
ուամբ մէկու ձեռքով կազմուել եւ ու-
կիապատ նորոգուել է: Այս ձեռագիրն
երկու յիշատակարաններուն զատ Դուկա-
սոս Աւետարանին ծայրը ունի մի այլ յի-
շատակարան, յորմէ կը տեսնուի որ վե-
րոյնիւնայ Յովհաննէս Եպիսկոպոսն՝ միա-
րան Կոտուց Ս. Անսպատի, այս ձեռագիրն
կը շնորհէ, դարձեալ նոյն Անսպատի մի-
արան Տիգրանակերտցի Պաղտասար ան-
ուամբ Աւագ սարկաւազին յամի Տեառն
ՌՄԿԳ (1814), Օգոստոս ԺԷ. Կոտուց Ս.
Անսպատին մէջ: Այս ձեռագիրն կը պա-
րունակէ չորս Աւետարաններ, մէն մի Ա-
ւետարանի սկիզբն կը գտնուի Աւետա-
րանին գունուտ պատկերին ոսկիապատ
պսակով եւ ոսկի չրջանակով: Կազմը ու-
կեղծ եւ վախճուչ: Գրերն ալ խիտ մա-
քուր են, յուսանցքին տակ կը գտնուի
համարաբարձ մը: Գեղանկարութիւնն ալ
զօնացուցիչ է:

ԻԱ.

Մաշտոց Թղթեայ

Այս ձեռագիրը կը գտնուի դարձեալ
Պարտիզակի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ:
Այս մաշտոց, Մկրտումեան կանոնէ
վերջ՝ ունի մի յիշատակարան, յորմէ կը
հասկցուի թէ Մարտունեցի մէկը (անուն

անյայտ, իրան մատիտով եղիայ գրուած) եւ զոգիւս գացեր եւ հոն Ս. Պարսամայ եւ կեկեցոյն մէջ մնալով աւարտեր է այս Մաշտոցիկի իր եղեայ անուն զպրին ձեռնարով ի վայելուծ Տէր Կերակոս քանանաւի, ի թուին ՆՈՃԼԻԲ ամսոյն Նոյնմարտի: Թուականի սոյն տարօրինակ գրութուածքն սապկա կրեանք մեկնել՝ իւրաքանչիւր գրի թուական արժէքն իրարու վրայ կը գումարենք եւ գումարն կ'եղի 1152 (1703), հաւանական թուականն սոյն ընդօրինակութեան:

Սոյն Մաշտոցն փոքրագիր է եւ ծոցի. գրերն քնն աշխւի գեղեցիկ եւ զարդարուն, զլիազորներն ու ծածկութիւններն կարմրաղեղձով գրուած են: Քաշանայից ծոցի այժմու Մաշտոցը համառօտութիւն է այս մեր ձեռագիր Մաշտոցին: Մաղկանիկարութիւնն իրիտ փայլուն է:

ԻԲ.

Աւետարան քղբեայ

Դարձեալ Պարտիզակի Ս. Յակոբ եւ կեղեցւոյ մէջ կը գտնուի այս ձեռագիրը: Երեկոթեան է, եւ ծայրն այ ընդարձակ մի զոհարանական յիշատակարան ունի, յորմէ կ'իմաստար թէ իշխաթ անուն մէկն ընդօրինակել կու տայ զայս, ի յիշատակ ձեռոյն եւ սոճմին իւրոյ: Ձեռագրոյս գրիւն է Կիրակոս անուամբ մի քանանայ, գրուած է ի թուին Հայոց ՌԷԳ (1584), Աղթամարցի Տէր Գրիգորիոսի Կաթողիկոսութեան ժամանակ, ի Ս. Երուսաղէմ, ի վանս Ս. Յակոբայ: Բայց յիշատակարանագիրն կը յաւելու թէ առաջին երկու պոսիւններն միայն ի Ս. Երուսաղէմ գրութուած են, ի վանս Ս. Յակոբայ Հայոց, իսկ մարդոցութիւնն աւարտած է լեւիւրն Մեծարտանք ի Ս. ուխտն Ապարանց, Առաքնորդութեան Տ(էր) Թովմա Արճիւնպիսկոպոսին: Մէջ մի Աւետարանի րուիւրն կը գտնուի Աւետարանէին զոնաւոր պատկերն միջակ արուեստով, ծաղկանիկարութիւնն այ րոտ րուականի զոհացուցիչ է: Լուսանցքին մէջ ալ մի համարարարտ: Գլխաղբերու ծաղկներն ալ կարծաղեղձով շինուած են:

ԻԳ.

Քարոզգիրք քղբեայ

Կը գտնուի Պարտիզակի Աղղ. Մատենադարանին մէջ: Այս ձեռագիրը կը բուխանդակէ 73 քարոզներ՝ որ ընդօրինակ-

ուած են մեծ մասամբ Յովհաննէս Ռրտեկեցւոյ, Գրիգոր եռամեծի եւ այլոց վարդապետաց մերոց գրուածքներէն: Խարույն Տեան մերոյ Յիսուսի Քրիստոսի Տէրունական աւուրց ընթացքին վրայ շինուած է: Այս Քարոզգիրքն ունի մի հակիրճ յիշատակարան, յորմէ կը հասկըցուի թէ Կտուց Ս. Անապատի միարան Պաղչէնոյցի Յովհաննէս Եպիսկոպոս իր անձին համար վարձքով օրինակել կու տայ վանաց մէջ Մոկացի Այթլարմաղեան Յովհաննէս Նոտարին, ի թուին Հայոց ՌՄԾԵ (1806) յամենան Յուլիսի երեք: Հաջիւ հարիւր տարուան հնութիւն ունի այս ձեռագիրն, գրերն ու տողերն յոյժ մանր են, զլիսատառերն այ կարմրաղեղձով շինուած են: Մաղկանիկարութիւնն յոյժ վայելուչ է: Մէջ մի քարոզի սկիզբն լուսանցքին վրայ շինուած է օրուան քարոզին խորհրդաւոր եւ գունաւոր պատկերը:

ԻԴ.

Աւետարան մագաղաքեայ

Կը գտնուի Նիկոմիդիոյ վիճակին Քարցի զիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ունի մի յիշատակարան, յորմէ կը հասկըցուի որ Ս. Էջմիածնի Փիլիպպոս Կաթողիկոսի, Ս. Երուսաղէմայ Աստուածատուր Պատրիարքի եւ Տաճկաց Սուլթան Իպրահիմի ժամանակ, Հայոց ՌՂԷ (1646) թուականին Կ. Պոլսոյ մէջ, ի գլուռն Ս. Հրէշտակապետ եկեղեցւոյ, ընդօրինակած է Ակնցի Հաղար անուամբ մի երէց, յորմէ ստացեր է Քարձիցի խօնա Կիրեղ անուամբ նշանաւոր անձ մի, եւ յիշատակ իր նեթեցելոց կը նուիրէ Ս. Աստուածածին եկեղեցւոյ: Սոյն ձեռագիրն զգրուած է պատուական մագաղաքի վրայ: Մէջ մի Աւետարանի սկիզբն կը գտնուի Աւետարանէին ոսկեղջրով պարզարուած գունաղեղ պատկերն: Մագաղանկարութիւնն ու գեղարարութիւնն սքանչելի են, գրերն այ վերջին աստիճան գեղեցիկ ու մաքուր: Ձեռագրեա սկիզբն եւ լուսանցքին տակ կը գտնուի չորս Աւետարաններու համարարարտն, ինչպէս ունին ուրիշ ձեռագիր Աւետարաններն: Ձեռագիրս չորսընակի արծաթապատ է:

ԻԵ.

Հայոյ զիւր մագաղաքեայ

Կը գտնուի Եայօլայի Քարձի զիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Դրժարագրարար սոյն մագաղաքեայ ձեռու-

դրին կէսն ինկած — կորսուած է, սկիզբն պակաս թերթ չունի: Յիշատակարան չունի, միայն թէ Երկու տեղ յուսանցքին վրայ գրուած է թէ ձեռագիրն ընդօրինակուած է Լկինցի Ղազար երեցն, մեծ հաւանութեամբ Ի՛ն (24)րդ մագաղաթեայ Աւետարանին ընդօրինակողն: Գրերն մաքուր ու պատուական են: Մագկանկարութիւնն ու զեղանկարութիւնն այ խիստ վայելուչ: Տօներու, Պա՛հոց եւ Տէրունական օրերու յիշատակութիւնն գրուած է տակի յուսանցքին վրայ, իսկ բացատրութիւնքն գրուած են կանոնի սկիզբն: Աւագ որ կիսով կը պակսի եւ յիշատակարան չունենայով անշարժ զգաւ աւելի քան տեղեկութիւններն առնել այս պատուական ձաշու Գիրք ձեռագիրին վրայ:

ԻԶ.

Մաշտոց թղթեայ

Դարձեայ կը գտնուի վիճակիս Եայօվայի Գարձի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, ունի մի ընդարձակ յիշատակարան, յորմէ կը հասկցուի թէ Զաքարիա անուամբ մի եպիսկոպոս Յովսէփ եպիսկոպոսի մը խնդրանօք, ընդօրինակած է դայս Հայոց ՌԻ (1571) թուականին: Յիշատակարանին մէջ սա հետեւեայ կտորն կայ. «Է՛լ Լիմն գրեցաւ եւ յԱրծուարիս Աստուածածին աւարտեցաւ, ձեռամբ Զաքարիա եպիսկոպոս մեղապարտի, ի կրկին Գալիբերունի, ի յԱռաջնորդութեան Ս. Ուխտիս, Թախտիս Սուխարայ Տէր Մինաս եպիսկոպոսի եւ այլ միարան եղբարցս»:

Յիշատակարանի վերջը, Յովսէփ եպիսկոպոս իր ինքնագիր գրովն կը յաւելու ըսելով թէ՛ այս ձեռագիր Մաշտոց գրել տուի ի յիշտակ ծնողացս հոգոյն, նուիրեցի Ռարակօնից գիւղի Ս. Թէոդորոս զօրավար եկեղեցւոյն: Սոյն ձեռագրին վրէն միջակ են, զեղագրութիւնն ու ծագանկարութիւնն այ աւրուելու վրայ է: Միջակ այժմու Մաշտոցէն տարբերութիւն չունի: Կազմուած է Մաշտոցն եւ երկու ծայրերը կը տեսնուին երկաթեայ գրերով թղթեայ Աւետարանի մի քանի թերթեր: Չենք գիտեր թէ ինչպէս դիւրս բերուած է այս ձեռագիրը:

ԻԻ.

Աւետարան թղթեայ

Դարձեայ կը գտնուի Եայօվայի Գարձի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ

մէջ: Երկու յիշատակարան ունի: Միոյն կէսն պատուած է, ոչինչ կրնանք հասկընայ: Իսկ միւսն կը հասկցուի որ խճաւ Միմոն անուամբ մէկը գնէր է այս ձեռագիրն Աւետարանն ի յիշտակ իր ծնողաց, Յովսէփ անուն Երէցի մը ձեռքով, Հայոց ՌԷԸ (1589) թուականին, Սուրբ Աստուածամոր եկեղեցւոյ նուիրած է: Ո՛ր եւ Խ՛րր գրուիլը եւ ո՞վ գրելը անկարելի եղաւ հասկնայ, զի կիսով պատուած են առաջին յիշատակարանը: Մոյն ձեռագրին վրէն խոշոր եւ անզարդ են, ո՛չ դունաւոր պատկեր ունի եւ ո՛չ այլ ծագանկարութիւն, միայն ուրեք ուրեք կը տեսնուին կարմրազեղով զլիսատաւեր: Չորս Աւետարաններն լման են, ինկած թերթեր չունին:

ԻԸ.

ժամագիրք Ատեմի թղթեայ

Դարձեայ կը գտնուի Եայօվայի Գարձի գիւղի Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ: Սոյն ձեռագրին ժամակարգութեան վերջ ունի մի կարճ յիշատակարան, յորմէ կը հասկցուի թէ այս ժամագրոց ծրարիչն եղած է Ռազդեցի Ստեփաննոս երէցն, որդի Տէր Ղազար երիցոյ: Հաւանաբար ծայրը ունենայու էր մի ուրիշ յիշատակարան, զի ժամագրքիս ծայրը նոր ու պարզ կերպով գրուած է հետեւեայր. «Յիշտակ է այս գիրքս Գարձի Ս. Աստուածածին եկեղեցւոյն, Սարգ Օղլու Ունանին հօրը հոգոյն, ի թոյնն Հայոց ՌՃԼԶ (1687)ին»:

